

Մաթիկին պատմում էն չունիմ ասոնք: Անիկա այդ լեռները տուաւ համեմատական կենդանութեան մը ծոցէն: Ջարդերը յաջորդող սուտ խաղաղութիւնն էր ատիկա: Մելիքխանեանց Մաթիկը ինքզինքը կը պատկերէր արկածախնդիր երիտասարդի իր տարրին խորը: Վաչկատուն բնագոյր դժուար է արմատախիլ ընել կարգ մը մարդոց հոգիներէն: Ու անճիշդ չըլլայ թերեւս այդ բնագոյին կապել արդի ալ նստակեաց ընկերութեան բոլոր տականքները, ոճերը, իր շատ մը պարունակներով: Թափառականը, որուն նմոյշներուն մէջ երբեմն հանդիպելի են մեծատաղանդ բանաստեղծներ անգամ:

Ուրի՞չ բան տրիբուն ու ինտելիգենտ Մաթիկը, սաքարայրէն առաջ, «Սասնայ սարերում»։ Զինքը չորին մտիկ դարձեալ։ Զէին կրնար, վասնզի գեղացին ուրիշ կերպ կը զգար պատրաստուող աղէտը։ Վասնզի՝ տկար անոր մարմինը միշտ պիտի դաւէր անոր։ Իր դժբախտութիւնը հոն իրեն դէմ հանեց ուրիշ դէմքեր, որոնք կռուի մէջ իրենց մեծ փորձառութեամբը ունէին փառքի լուսապսակ, բայց հասարակական ծանօթութիւններէ, յեղափոխական գիտակից, լուրջ, հիմնական գաղափարաբանութենէն ոչ իսկ պտղունց մը բան, ու ասով՝ ծիծաղելի կը թուէին իրեն, իրենց գործերուն ու դատումներուն մէջ։ Բախումը չուշացաւ Մոսկուայի համալսարանի ուսանողի եւ թաղային վարժարան իսկ չաւարտած, բայց թշնամին գոց ըրած մարդոց մէջտեղը։ Ասոնք, կռուի յօրինումներ, ատեն չունէին տնտնալու որոճողական ապացուցումներու, ընկրկումներու, շուարումներու, որոնք իմացական խորքէ կարգ մը գործիչներուն թերութիւնները եղան պայքարի բուռն պահերուն, ու պատճառեցին անոնց արժեգրկումը։ Մտիկ չորին զինքը, հակառակ Կեդրոնին հրահանգներուն, նոյնիսկ ա՛յն հարցերուն եւ որոշումներուն մէջ, ուր անոր տեսակ մը անփորձառու զգայարանքները գուշակած էին ճիշդ։ Իբր վայրերանի, անոր գլխուն փաթթեցին շարք մը անյաջողութիւններ, որոնք արդիւնք էին վարիչներուն անփութութեան։